ՄԵՆԱՎՈՐԻԿԻ ՎԵՐՋԻՆ ՕՊԵՐԱՆ՝ ԱՆՎԵՐՋ ՍՈՒԳ

Posted on June 18, 2016 by Keghart

keghart.com

Category: Opinions

Սայիդ Չեթինօղլու, Թուրքիա, 1 Հունիս 2016

Կյանքի դժվարին պայմանների դեմ երկար ժամանակ անպաշտպան մնացած, Մենավորիկ Կոմիտաս վարդապետի՝ տառապանքով ուղեկցված կյանքում, ուր ցավալի իրադարձություններն անվերջանալի շղթայի պես հաջորդում էին մեկը մյուսին, կարելի է առանձնացնել որբության երեք ժամանակաշրջան: Կենսաբանական որբություն՝ այն ժամանակաշրջանը, երբ կորցրել էր ծնողներին, հոգևոր որբություն՝ Գևորգ IV կաթողիկոսի և հայ ժողովրդի խնամարկու՝ Խրիմյան Հայրիկի վախճանը, և հավերժական որբություն՝ Ցեղասպանություն. հայ ժողովրդի բնաջնջումն ու մահը:

Պարտությամբ կյանք մուտք գործած և տևական ժամանակ պարտության զգացումից ազատվելու հնարավորություն չունեցող, որբ ու միայնակ Կոմիտաս վարդապետի կյանքի ծանր պայմանները նրա՝ հոռետես բնավորություն ձեռք բերելու և կյանքի մի զգալի հատվածն պաշտպանական կեցվածքով ապրելու պատճառ դարձան:

Սայիդ Չեթինօղլու, Թուրքիա, 1 Հունիս 2016

Կյանքի դժվարին պայմանների դեմ երկար ժամանակ անպաշտպան մնացած, Մենավորիկ Կոմիտաս վարդապետի՝ տառապանքով ուղեկցված կյանքում, ուր ցավալի իրադարձություններն անվերջանալի շղթայի պես հաջորդում էին մեկը մյուսին, կարելի է առանձնացնել որբության երեք ժամանակաշրջան: Կենսաբանական որբություն՝ այն ժամանակաշրջանը, երբ կորցրել էր ծնողներին, հոգևոր որբություն՝ Գևորգ IV կաթողիկոսի և հայ ժողովրդի խնամարկու՝ Խրիմյան Հայրիկի վախճանը, և հավերժական որբություն՝ Ցեղասպանություն. հայ ժողովրդի բնաջնջումն ու մահը:

Պարտությամբ կյանք մուտք գործած և տևական ժամանակ պարտության զգացումից ազատվելու հնարավորություն չունեցող, որբ ու միայնակ Կոմիտաս վարդապետի կյանքի ծանր պայմանները նրա՝ հոռետես բնավորություն ձեռք բերելու և կյանքի մի զգալի հատվածն պաշտպանական կեցվածքով ապրելու պատճառ դարձան:

Քահանա դառնալու ընտրությունն, ամենայն հավանականությամբ, վերոնշյալ հոգեկերտվածքի արդյունքն է: Հաշվի առնելով նրա ընդունակությունները՝ ուղարկեցին Սուրբ Էջմիածին. կարո՞ղ եք պատկերացնել 12 տարեկան երեխայի վիճակը, երբ նոր-նոր է առաջին քայլերն անում (1881թ. հոկտեմբերի 1) և պարզ է դառնում, որ հայերեն չգիտի ու կաթողիկոսն էլ նրան ասում է. «Եթե հայերեն չգիտես, ի՞նչ գործ ունես այստեղ»:

Հոռետես բնավորության և լռության մեջ աննկատելիորեն զարգացնելով իր բնատուր ընդունակությունները, նա միաձուլվեց իր ժողովրդի հետ՝ այդպիսով հաղթահարելով

սեփական որբությունն ու մենությունը, իր ազգի զգացումներն արվեստի վերածեց և ինքն իրեն գտավ, և իր զգացմունքներն ու փոթորկումներն արտահայտեց ժողովրդական երգի միջոցով: Երաժշտությունը և հատկապես հայ ժողովրդական, գեղջկական երգը Կոմիտասի համար ամեն ինչ էր: Երաժշտության ու մեղեդու մեջ պարփակված փոթորիկները թեթևացնում էին նրա հոգու խորքում անթեղված կրակը: Իր ժողովորդի մեջ նա շարունակ մայրական բուրմունքն էր փնտրում: Վեց ամսականում մորը կորցրած երեխայի ամենամեծ կորուստը մոր քնքշանքն ու մայրական բույրն է:

Մոր՝ Թագուհու մահով մանուկ Կոմիտասը կորցրեց այն մարդուն, ով նրա համար կարող էր դառնալ ապահովության կացարան, ուր կվերադառնար շրջակա աշխարհը բացահայտելու փորձերից հետո: Կոմիտասի կյանքի հատուկենտ դրվագների նկարագրությունից պարզորոշ կարելի է հասկանալ, որ մոր կորուստը երիտասարդ ու նոր ձևավորվող Կոմիտասի հոգեկան աշխարհում անկայունության պատճառ էր դարձել:

Կոմիտասի կենսագիրներից մեկի վկայությամբ, երբ նա փոքր էր, անընդհատ հետապնդում է իր տատիկին՝ հարցնելով.«Որևէ մեկն ինձ հարցրե՞լ է»: Հոգեբույժ Ռիտա Սուլահյան- Կույումջյանն այդ մասին գրում է. «Անդառնալիորեն կորսված պաշտպանին գտնելու նման հուսահատ փնտրտուքը բնորոշ է այն երեխաներին, ովքեր տառապում են խոր տագնապով, ինչն ի հայտ է գալիս մոր մահից հետո: Անապահովության զգացումի հուժկու հարվածի տակ գտնվող ընկճված փոքրիկ տղան առաջնորդվում էր այն հույսով, թե իր մայրը նորից կհայտնվի, և նա, որ ընդմիշտ անհետացել է իր կյանքից, նորից «կգտնի» իրեն»:

Փոքր տարիքում նման կորստից ու ցավից հետո նա ըմբոստացավ մենության դեմ և որդեգրեց ըմբոստության պասիվ ձևը: Կոմիտասի պասիվ ըմբոստության վառ օրինակ է այն, որ չհամաձայնեց դառնալ հորեղբոր հոգեզավակը, նրան չգրավեց հորեղբոր տունը ժառանգելու միտքը, այլ հիմնականում փողոցում էր մնում. նրան հաճախ կարելի էր տեսնել լվացքատներում քնած:

Ակնբախ է, որ Կոմիտասն իր առաջին որբության շրջանում անտարբեր է եղել ամեն ինչի հանդեպ:

Մանուկ հասակում որբացած և ընտանեկան խնամքից զրկված Կոմիտասը միաժամանակ ջանում էր գտնել իր ընտանիքը. պատկանելիությունը նրա համար անչափ կարևոր էր: Եվ որպես իր ընտանիք նա ընտրեց իր ժողովրդին և իրեն համարում էր այդ մեծ ընտանիքի մի մասնիկը:

Էջմիածնում ուսումնառության տարիներին Կոմիտասին ապրելու ուժ էր հաղորդում մորից ժառանգած ամենամեծ կարողությունը՝ երաժշտությունը: Կոմիտասի համար առանցքային նշանակություն ու կենսական դերակատարություն է ունենում նաև Գևորգ IV կաթողիկոսը, որ ուղղորդում և հովանավորում է Կոմիտասին՝ նրան իր ազգին

ավելի մերձեցնելով: Այս առումով Գևորգ IV կաթողիկոսը հայր էր Կոմիտասի համար և նրա մահը(1882թ. դեկտեմբեր) մեկ անգամ ևս որբացնում է Կոմիտասին՝ միայնակ թողնելով իր մենության հետ:

Կույումջյանը գրում է, որ Էջմիածնում հայերեն սովորելու համար նրան հանձնեցին ավելի բարձր տարիքի մի ճեմարանականի՝ մեծ եղբոր խնամքին: «Հայոց լեզվի իմացության աճի զուգահեռ մեծանում էր նրա վստահությունը իր ուսուցիչների և ճեմարանական ընկերների հանդեպ: Նրանց մեջ իր հարազատներին տեսնելով՝ նա վերագտավ վաղ մանկության տարիներին կորցրած հարաբերություններն ու շփումները»:

Էջմիածնում կրթություն ստանալու ընթացքում նա միաժամանակ հնարավորություն է ունենում շփվել ժողովրդի բոլոր հատվածների հետ: Գեղջկական և ժողովրդական երգերի՝ կյանքի հետ կապը, պարզությունը, նրանցում առկա իմպրովիզացիան ամբողջովին իրենց մեջ են առնում զգացմունքալեցուն Կոմիտասին: Ինքն էլ ժողովրդի հոգու խորքից բխած մեղեդին վերածում էր իսկական երաժշտական նմուշի:

Կոմիտասի՝ երաժշտությունը հավաքելու, գրի առնելու և ապագային փոխանցելու գործընթացը նման է պատմություն ավանդելուն: Բացի այդ, հետագայի երգահաններին նա թողնում է հարուստ հումքը:

Հայության հոգևոր հոր ու իսկական խնամարկուի՝ Խրիմյան Հայրիկի Էջմիածնում կաթողիկոսության շրջանը Կոմիտասի համար բարեբախտություն էր, միաժամանակ միայնությունը հաղթահարելու ամենակարևորը խթանը: Խրիմյանը հոր այն կերպարն էր, որի կարիքը զգում էր Կոմիտասը: Հենց Խրիմյանն է գլխավորում Կոմիտասի աբեղա ձեռնադրվելու արարողությունը:

Կոմիտասը Խրիմյան Հայրիկի հովանավորության շրջանում սկսեց ավելի լավ ճանաչել իր ժողովրդին, հասկացավ, որ իր ազգին մասին պատմող ամենակարճ ու ամենալավ միջոցը հայ ժողովրդական, գեղջկական երգն էր, որը ամենահիսկական կամուրջ էր ժողովրդին հասկանալու, այլոց այն հասկացնելու համար:

Հայ ժողովրդական երգը Կոմիտասին ոգևորության աղբյուրն էր, նա մեծ խանդավառությամբ ներկայացնում է աշխարհին հայ երգը, որպես իր հալածված ժողովրդի կյանքի պատում: Խրիմյան Հայրիկը նրան թե՛ բարոյական, թե՛ նյութական աջակցություն է ցույց տալիս: Նրա շնորհիվ Կոմիտասը հայ երգը ներկայացնում է աշխարհի ամենամեծ համերգասրահներում՝ իր պարտքը կատարելով սեփական ժողովրդի առջև: Եվ այս ճանապարհին աչք է փակում իր առջև հառնող խոչընդոտների ու դժվարությունների առջև:

Կոմիտասը 1907թ. սեպտեմբերին վերադառնում է Էջմիածին: Հոկտեմբերի 29-ին վախճանվում է Խրիմյան Հայրիկը. ասես հայրը սպասելիս լիներ որդուն:

Խրիմյան Հայրիկի մահը Կոմիտասին մեկ անգամ ևս որբության ու մենության գիրկն է նետում: Կաթողիկոս Խրիմյանի մահով Կոմիտասը կորցրել էր նաև վանքում իր կյանքի միակ պահապանին: Մարգարիտ Բաբայանին գրած նամակը վկայում է, որ Էջմիածնում նա նորից հայտնվել էր սարսափելի հոգեվիճակում. «Ոչ խելք են թողել, ոչ միտք, անհանգիստ եմ, չգիտեմ՝ ինչ անեմ: Երևակայի, որ շրջապատված եմ թանձր մառախուղով, ուզում եմ լույս, պայծառ լույս տեսնել, հեռանալ վեր, շատ վեր, այրող արևի հետ ապրել, բայց ճանապարհ չեմ գտնում, անիրավ օդի մեջ խեղդամահ եմ լինում»: Կոմիտասը չտեսնված պահանջկոտությամբ հուղարկավորում և հանդերձյալ աշխարհ է ճանապարհում իր ՀՈՐԸ:

Խրիմյան Հայրիկի վախճանից հետո Կոմիտասն Էջմիածնում անպաշտպան մնաց, դժվարացան նրա կյանքի պայմանները: Տարատեսակ խնդիրներ էին առաջանում նրա և Էջմիածնի հոգևոր ճեմարանի սաների միջև: Այս դրությունից դուրս գալու համար Կոմիտասը ցանկանում էր որպես ճգնակյաց հոգևորական գործուղվել Սևանա վանքի մենաստան, որտեղ մտադիր էր ուսումնասիրություն կատարել հայ եկեղեցու պատմության և երաժշտության վերաբերյալ: Սակայն նրա ցանկությանը չընդառաջեցին:

1910թ. ընդունելով ընկերոջ՝ Կարապետ Պարտիզպանյանի առաջարկը՝ դառնալ Պոլսի Ս ուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խմբավարը, լքում է Էջմիածինն ու մեկնում հայաշատ Պոլիս: Չնայած սկզբնական շրջանում Կոմիտասը Պոլսում անհանգիստ էր, սակայն դեպի ժողովուրդը ճանապարհին Պոլիս ժամանելը Կոմիտասի համար շրջադարձային էր: Կոմիտասը Պոլսում վերգտնելու էր իր պատկանելիությունը, նոր ընտանիք էր կազմելու: Գրիգորիս Պալաքյանի վկայությամբ՝ Կոմիտաս վարդապետն ու իր երգչախումբը շատ մեծ ու ազդեցիկ համերգներ են տվել: Կոմիտասը Պոլսում վերգտնելու էր իրեն, դարձյալ գրկախառնվելու ու փարվելու էր իր ժողովրդին: Սակայն Պոլսի պահպանողական հոգևորականությունը չէր ընկալում Կոմիտասի նման հեղափոխական արվեստագետին, որը ցանկանում էր մի կողմից պահպանել, մյուս կողմից էլ արդիականացնել հայկական ժողովրդական երգը:

Այս պատճառով Կոմիտասն ավելի էր մոտենալու և փարվելու իր ժողովրդին, կարճ ժամանակում դառնալու էր նրան ձուլված մի մասնիկը և պատկանելությամբ գամվելու էր նրան:

Սերն ու ոգևորությունը փոխադարձ էր. «Անցյալ գիշեր, բացականչում էր անվանի հայ գ րող Տիգրան Կամսարականը,երգելով ու բարբառելով, զուարճաբանելով, երբեմն ալ միշ տ հանկուցանելով, Հայաստան ուխտագնացության տարիք մեզի.կամ լավ ևս է ըսել քիչ մը Հայաստան բերիք Եգիպտոսի հայերուս..... դուք Մասիսն ու Արագածը փոխադրեցի ք պահ մը, ո՞վ ըսավ, թե լեռները չեն քալեր... »:

1912-1913 թթ., որոնք Կոմիտասի՝ իր ժողովորդի գրկում վերածնության ու հայերի հպարտության տարիներն էին, Օսմանյան կայսրությունն ապրում էր իր ամենաալեկոծ ժամանակաշրջանը: 1912-1913թթ. հայկական այբուբենի գյուտի 1500 և հայ տպագրության 400- ամյակի առթիվ կազմակեպվեցին հրապարակային միջոցառումներ ու տոնակատարություններ, որոնք ասես նվիրված էին այբուբենի սրբացմանն ու հայոց լեզվի աստվածացմանը: Այդ միջոցառումները համընկան Օսմանյան կայսրության համար աղետալի վերջաբան ունեցած Բալկանյան պատերազմի հետ, այն տարիներին էր նաև, որ Ռուսաստանը կրկին առաջ քաշեց Հայկական հարցը:

1913 թ. հոկտեմբերի 11-ին Պոլսում սկսված տոնակատարությունը, որը ստացավ Համազգային միություն անունը, ասես վերածվեց հայ քաղաքական ցույցի: Պոլսո հայոց պատրիարքարանի մայր եկեղեցում, հոծ բազմությամբ շրջապատված, օտարերկրյա դեսպանների, Օսմանյան կայսրության բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում ՝ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի ներկայությամբ, Կոմիտաս վարդապետի ղեկավարած 100 հոգանոց երգչախումբը կատարեց հայոց լեզուն գովերգող ու փառաբանող մի երգ:

Այս տոնակատարությունները Կոմիտասի՝ ժողովրդի գիրկն անցնելու, նրան փարվելու ու ձուլվելու գործում կարևոր նշանակություն ունեցան: Կոմիտասը կարծես վերածնվել էր իր ժողովրդի գրկում: Եվ այն անունը, որ նա տվել էր իր երգին, դրա վկայությունն է՝ «Ով մեծասքանչ դու լեզու»: 1913թ. հայտնի հոգևորական, երաժիշտ, երաժշտագետ, բանահավաք և ուսուցիչ Կոմիտաս վարդապետի համար շրջադարձային էր:

Կոմիտաս վարդապետը հայոց այբուբենի և լեզվի նկատմամբ ունեցած զգացումներն արտահայտելու համար միտք էր հղացել հայոց լեզվի պատվին երաժշտություն գրել և այդ տոնական օրը կատարել: «Ով մեծասքանչ դու լեզու» երգը նա հնչեցրեց 1913թ. հոկտեմբերի 11-ին: Հրապարակային տոնակատարությունները չսահմանափակվեցին Պատրիարքարանում կազմակերպված միջոցառմամբ: Հոկտեմբերի 13-26-ը Բերայի Pelit Champs թատրոնում, Թաքսիմի այգում և Քադըքոյում ևս միջոցառումներ կազմակերպվեցին, որոնց մասնակցեցին շուրջ 20 հազար մարդ: Օսմանյան կայսրության բարձրաստիճան պաշտոնյաները չէին բավարարվում սոսկ մասնակցությամբ, խոսք էին ասում, արտահայտում իրենց մտքերն ու զգացումները: Գում Գափուի Պատրիարքարանի մայր եկեղեցում արարողությունների մասնակից Թալեաթ փաշան, որն ընդամենը երկու տարի անց դառնալու էր հայերի Ցեղասպանության գլխավոր ճարտարապետը, կարճ ելույթ ունեցավ՝ գովելով հայերի աշխատասիրությունն և Օսմանյան կայսրությանը մատուցած նրանց ծառայությունները. «Օսմանյան ազգի ամեն մի մասնիկի՝ գիտության և հասարակական ոլորտում արձանագրած առաջխաղացումը Օսմանյան կայսրության կառավարության առաջխաղացումն է: Մեզ համար ասել հայրենիքի առաջադիմություն ու զարգացում՝ նշանակում է երջանկություն և բախտավորություն: Այսօր այստեղ ենք հավաքվել հայ

գրերի գյուտի 1500 և հայ գրատպության 400 ամյակի միջոցառումները պատշաճ նշելու համար: Կառավարության անունից կցանկանայի հայտնել, որ կիսում եմ ձեր ուրախությունը»:

Բերայում նույն միջոցառումների շրջանակում Կոմիտասի երգչախումբը կատարեց նաև «Ես լսեցի մի անուշ ձայն» և «Տեր, կեցո դու զՀայս» երգերը:

Կույումջյանը գրում է, որ զույգ տոների նման խանդավառ տոնելը տպավորություն էր ստեղծել, թե հայերը ապստամբության են պատրաստվում. «Հետադարձ հայացք գցելով՝ հասկանալի է դառնում, որ տոնակատարությունները ստվերված էին սարսափելի նախանշաններով: Տոնակատարությունների ընթացքում առաջադեմ հայ մտավորականների, հոգևորականության, գրողների, բանաստեղծների և արվեստագետների ցուցաբերած համախմբվածությունն էլ ավելի սաստկացրեց թուրքական իշխանությունների մեջ արդեն իսկ խորացած վախն ու զայրույթը: Դարեր շարունակ թուրքական իշխանություններն արգելում էին հայոց լեզվի գործածումը՝ հուսալով, թե ի վերջո հայերն իրենք իրենց կձուլվեն: Հայոց գրերի 1500-ամյակին նվիրված տոնակատարությունները ապացույցն էին այն բանի, որ թուրքերի ծրագրերը ձախողվել էին: Հենց այս պատճառով էր, որ տոնակատարության ընթացքում սրբորեն պահպանված հայոց լեզվով հպարտանալը բազմաթիվ թուրք իշխանավորների կողմից, ըստ երևույթին, մեկնաբանվեց որպես ապստամբության նախանշան»:

Թալեաթը, որ 1913թ. հոկտեմբերի 13-ին հայերի առջև ունեցած ելույթում շողոքորթում էր նրանց, 1915թ. մարտի 25-ին Ջեմալ բեյին գրած նամակում ասում է, որ հայերի ոչնչացումը դարեր ի վեր գոյություն ունեցող և իրենց վրա ընկած«պատասխանատվության» մի մասն է. «Մեր բոլորի նպատակն ու պարտականությունն է դարեր ի վեր պետության բնականոն զարգացմանն ու առաջադիմությանը խոչընդոտող խմբերին ոչնչացնելն ու խոչընդոտներից մաքրված քաղաքական դաշտ ստեղծել: Այս նպատակի համար միջոցների միջև խտրականության չպետք է դնենք: Ստանձնելով ողջ պատասխանատվությունը, և գիտակցելով, որ կառավարությունը՝ միանալով պատերազմին, մեծ զոհաբերության է գնում՝պետք է աշխատենք բոլոր հնարավոր միջոցներով հասնել մեր նպատակին»:

1915թ. փետրվարի 18-ին գրված մեկ այլ նամակում Թալեաթը ընդգծում է. «Միություն և առաջադիմություն կոմիտեն վճռել է իր նպատակների իրականացման ճանապարհին իր դեմ պայքարող բոլոր խմբերին մինչև արմատը ոչնչացնել, այդ պատճառով, դժբախտաբար, ստիպված է դիմել շատ արյունոտ միջոցների: Հավատացեք, մեզ էլ է տխրեցնում այդ սարսափազդու միջոցների գործադրումը, սակայն կոմիտեն իր հավերժական գոյությունը պահպանելու համար դրանից բացի որևէ այլ ճանապարհ չի տեսնում»:

Իսկ հայ մտավորականները վստահում էին Իթթիհաթ վե թերաքիին և սպասում, որ

ռեֆորմներ է իրականացնելու: Կոմիտասն էլ նրանց վստահում ու նրանց հետ հույս էր կապում: Կոմիտասն ու Պոլսի հայ մտավորականության մեծագույն մասը շարունակում էր հավատալ կառավարության բարեփոխումների խոստմանը: Նրանք կարևորություն չտվեցին հայ մշակույթի դեմ ահագնացող վրեժխնդրությանն ու սպառնալիքներին: Տոնակատարություններից հետո գրողներից, արվեստագետներից և պատմաբաններից ստեղծվեց հատուկ կոմիտե, որի նպատակը հայկական վիլայեթների լքված հայկական մշակութային հուշարձանների ուսումնասիրությունն էր: Կոմիտասը նախատեսում էր Դանիել Վարուժանի ընկերակցությամբ մեկնել Սասուն, բանավոր պատմություններ հավաքել հայկական էպոսի՝ Սասնա ծռերի վերաբերյալ, որն էլ էպիկական օպերայի հիմք պետք է դառնար: Ծրագիրը կյանքի չկոչվեց:

Իր ժողովրդի ուրախության, վշտի և առհասարակ կյանքի երգերը հավաքող ու գրի առնող Կոմիտասն իրեն տեսնում այդ երգերի մեջ, իսկ իր համար երանության գագաթն էր, երբ ինքն իրեն մոռանում էր այդ միջավայրում: Չնայած Պոլսում ունեցած որոշակի դժվարություններին՝ աննահմանորեն նվիրված էր իր ժողովրդին: Այս տեսանկյունից պետք է մեկնաբանել երգի անունն ու Սասնա ծռերը գրի առնելու մտահղացումը:

Կոմիտասի ուրախությունը երկար չէր տևելու. կարճ ժամանակ անց սկսված Ցեղասպանության ընթացքում ոչնչացվելու էր այն ժողովուրդը, որի զավակն էր ու մասնիկը: Նա տեղյակ էր և գիտակցում էր, թե ինչ է պատուհասում իր ժողովրդին: Հայերի դեմ հարձակումները Ցեղասպանությունից դեռ շատ առաջ էին սկիզբ առել: 1914թ պատմական Հայաստանում պայմաններն այնքան դժնի ու ահավոր էին, որ այդ մասին Կոմիտասը չէր կարող չիմանալ: Իր ընկեր Երվանդ Հակոբյանին 1914թ. հոկտեմբերի 26-ին Պոլսից գրած նամակում ասում է. «Ժամանակիս վայրագութիւններէն ըստ կարելւոյն հեռու պահելով միտքս ու զգացումներս, անդադար կաշխատիմ կարևոր ուսումնասիրութիւններով: Խմբիս համերգները չը կըրցայ տակաւին սկսել՝ աշակերտներուս զինվորագրութեան պատճառեաւ, սակայն եւ այնպէս շաբթուս նոր խումբ կազմակերպելու նախապատրաստութեան սկսայ: Յոյս ունիմ զատկական տոներին հասցնել մեր հնագոյն եղանակներով ներշնչուած Սուրբ Պատարագի Արարողութիւնները՝ զորս պիտի ուսուցանեմ նոր խմբիս»:

Կոմիտասը Ցեղասպանությունից պատահականորեն փրկվեց, չգիտենք՝ թե ոնց, և կարևոր էլ չէ: 1915 թ. Ցեղասպանությանը *քաղաքակիրթ* աշխարհի աչքի առջև ոչնչացվեց Կոմիտասի ժողովուրդը, քաղաքակիրթ աշխարհն էլ ձայն չբարձրացրեց բնաջնջման դեմ: 1915թ. Ցեղասպանությունը չունեցավ իր Նյուրնբերգը, ընդհակառակը, մեղավորները տարատեսակ պարգևների արժանացան: Կարելի է հասկանալ Կոմիտասին, որ կորցրել էր իր ընտանիքը և ժողովրդից բացի ոչինչ չուներ: 1915թ. Հայոց ցեղասպանությունը ի չիք դարձրեց ապագայի հետ կապված Կոմիտասի բոլոր ծրագրերն ու երազանքները: Կոմիտասի զայրույթն ու լռությունն ամբողջ մարդկությանն էր: Աշխարհը 1915թ. Ցեղասպանությունը մոռացավ և համոզում էր հայ ժողովրդին, թե

նրա հետ առանձնապես ոչինչ էլ տեղի չի ունեցել և պետք է առաջ շարժվել, առանց այն հիշելու: Այժմ էլ շարունակում է ժխտել և այդպես համոզել:

1915թ. ապրիլի 24ի երեկոյան ոստիկանության բանտում ընկերոջը՝ Վահրամ Թորգոմյա նին սփոփող և աքսորյալներին խիզախություն հաղորդելու համար Չանքըրըի ճանապ արհին «Լեբլեբիջի Հորհոր աղա» կատակերգական օպերան երգողԿոմիտասն այն Կոմի տասը չէր, որ Չանքըրըից Ստամբուլ վերադարձավ: Չանքըրը աքսորի ճանապարհին Կո միտասըտեսնում է իր ազգի մահը, նրա բնաջնջումը: Մահվան ճամբարից վերադառնալ ուց հետո ժողովրդի համար սգալըմիանգամայն հասկանալի է: Այո՛, բոլորի համար էլ սու գը խորն էր ու անդառնալի... Իսկ Կոմիտասը մեկ անգամ ևս որբացավ:

Կույումջյանն այսպես է նկարագրում տիրող մթնոլորտը. «Կոստանդնուպոլսում հայերը օսմանյան կառավարությանձեռքում փաստացի պաշարման մեջ էին: Նրանցից շատերը ոստիկանության գաղտնի գործակալների հսկողության տակ էին: Խումբխումբ «փողոցներու մէջ պատահաբար հայերը կ՝ձերբակալէին»: Թուրք ոստիկանների դաժան հարձակումներըհայերի վրա, նույնիսկ՝ օրը ցերեկով, քաղաքում սովորական երևույթ էին դարձել: Հետևաբար զարմանալի չէ, որ Կոմիտասի համար, ում բնակարանը գտնվում էր քաղաքի կենտրոնական ոստիկանատան հարևանությամբ, որտեղ հայերը պարբերաբար ենթարկվում էին դաժան հարցաքննությունների, Կոստանդնուպոլսում կյանքն ասես իր ազատազրկման շարունակությունը լիներ»:

Անելանելի դրության մեջ հայտնված Կոմիտաս վարդապետը, ականատես լինելով, իբրև հոգևորական, սուգ պահելուց բացի, այլ բան չէր կարող անել: Պարզապես այդպես. նա այլ ելք չուներ: Կոմիտասին խոցում էր այն, որ իր մտերիմները չէին հասկանում իր սուգն ու ցավը: Եվ նա անձայն մնաց մինչ այն պահը, երբ լռեց հավիտյան:

Կոմիտասը Ցեղասպանությունից փրկված մյուս հայ զոհերից տարբերվում էր նրանով, որ այլոք ընտանիք ունեին, իսկ իր ընտանիքը՝ հայ ժողովուրդը, ոչնչացվում էր այլևս երբևէ չլինելու մտադրությամբ:

Այդ պատճառով Չանքըրում նրա հնչեցրած «Տեր ողորմեան» այլ էր:

Նա արդեն սկսել էր իր ազգի համար սուգ պահել: Գրիգորիս Պալաքյանն իր «Հայ գողգոթան» գրքում գրում է. «Երբ Կոմիտասը սկսեց տխուր ու սրտերը մաշող Տէր Ողորմեան, մենք չկարողացանք զսպել մեզ ու հեկեկացինք: Բոլորս լացում էինք երեխաների պես: Գուցե Կոմիտաս վարդապետ երբևէ նման տխրությամբ չէր կատարել Տէր Ողորմեան: Տէր Ողորմեան կատարում են սգավորների ցավը, վիշտը թեթևացնելու, նրանց մխիթարելու նպատակով: Այս անգամ Կոմիտասը կատարում էր իր ցավի, հոգեկան տառապանքի համար և Բարձրյալից մխիթարություն և հոգեկան խաղաղություն էր խնդրում: Սակայն Աստված անձայն ու լուռ մնաց»:

Կոմիտասը մահվան ճամբարից վերադառնուց հետո մինչև կյանքի վերջին րոպեն միայնակ էր և անկացարան: Չկար այն ժողովուրդը, որի կրծքին փարվում էր, բնաջնջվել էր այն ազգը, որի կրծքին ապաստան էր գտնում: Եթե մյուս փրկվածների համար կյանքը նորից կարող էր բնականոն հուն մտնել, Կոմիտասի համար այդպես չէր: Նրա սուգը շարունակվելու էր:Կոմիտասի սուգը երկար ու երկար էր ձգվելու:

Ընկերներն ու բարեկամները չկարողացան հասկանալ նրա վարքագիծը: Նրան հիվանդ համարելով՝ սկսեցին խորհել բուժման մասին: Եվ այն միջոցը, որ գտան, բացարձակապես անընդունելի էր Կոմիտասի պարագայում: Նա մերժելու էր բուժվել թուրք զինվորների հրամանատարության տակ գտնվող հիվանդանոցում, չէր համագործակցելու բժիշկների հետ: Հույն բժիշկը, որի հետ էր միայն Կոմիտասը խոսում, մահացավ և բժիշկների հետ նա այլևս չխոսեց:

Կոմիտասի ընկերները, առանց նրա իմացության, բուժման ծախսերը հոգալու համար վաճառեցին նրա իրերը՝ անտունիին մեկ անգամ ևս թողնելով որբ ու անտեր: Նա փակվեց ու մեկուսացավ աշխարհից, ինչպես կենսաբանական որբության շրջանում: Այս անգամ այլևս գոյություն չուներ այն շարժառիթը, որը նրան դեպի կյանք կմղեր:Մինչև իր կյանքի վերջին պահը հասկանալու և պատկերացնելու կարողությունը չէր կորցրել, տեղն էր նաև գիտակցությունը:

Հակառակ տարածված կարծիքի՝ դա Կոմիտասի նախընտրությունն էր, գիտակցված ընտրությունը:

Կոմիտասի անվերջանալի սգո պատճառը նաև այն էր, որ նախորդ որբությունների ժամանակ հողին հանձնելով իրծնողներին ու հոգևոր հայրերին, կատարել էր իր վերջին պարտականությունը: Այժմ
այն ժողովուրդը, որի գրկում մեծացել էրԿոմիտասը, և որն իր ապաստանն էր եղել, չուներ նույնիսկ գերեզման, և նա, որ իր ժողովրդի զավակը լինելուն զուգահեռնաև հոգևորական էր, չէր կատարել իր վերջին պարտականությունը, չէր տվել վերջին հրաժեշտըև հողին չէր հանձնել:Կոմիտասն ուզում էր իրեն հողին հանձնել՝ հրաժեշտ տալով իր ազգին: Նրա լռության պատճառը նաև սա էր:

Կոմիտասի ընկերները, բարեկամներն ու ժամանակակիցները նրան չէին կարող հասկանալ: Կոմիտասի սուգը չէր ավարտվելու: Որպես զավակ և որպես հոգևորական նա ուզում էր հանգչել իր
անթաղ ժողովորդի կրծքին: Սրանում է Կոմիտասի նշանակությունն ու կարևորությունը:

Այս պատճառով է, որ ամեն անգամ նրան նայելիս՝ մեր աչքերն արտասուքով են լցվում:

Այս և հետագա մեջբերումներն արված են Ռիտա Սուլահյան-Կույումջյանի «Խելագարության ակունքներում Կոմիտաս. Հայ կուռքի դիմանկարը» գրքի հայերեն թարգմանությունից /Երևան Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2015թ/